

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ XX ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ
ՓԱՐԻԶՈՒՄ
(Օգոստոսի 19–25, 2001 թ.)

Համաշխարհային պատմության հորձանուտում իր ուրույն տեղն է ունեցել Բյուզանդական կայսրությունը: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում բյուզանդագիտությունը դարձել է միջնադարագիտության կարևորագույն փորձաքարերից մեկը: Եվրոպական և մերձավորարևելյան տարածաշրջանների միջնադարյան պատմության հետադոտողները հաճախ են անդրադառնում Բյուզանդական կայսրության պատմության դրվագներին, այդ երկրի դարդացման օրինաչափությունների հիման վրա ուսումնասիրում են նաև իրենց հետաքրքրող տարածաշրջանը: Վերջին հարյուրամյակի ընթացքում բյուզանդագիտությունը աննախընթաց զարգացում է ունեցել: Բյուզանդագիտական դպրոցների հաստատումը աշխարհի տարբեր համալսարաններում թույլ է տվել նոր Հռոմի պատմության և մշակույթի բազմակողմանի ուսումնասիրություն, ստեղծվել են բազմաթիվ օժանդակ դիտաճյուղեր, որոնք իրենց նպաստն են բերում գիտության զարգացմանը: Բյուզանդագետների հսկա բանակը, որը ստեղծագործում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, հինգ տարին մեկ հավաքվում է ի մի բերելու և արժևորելու անցած ճանապարհը: Այս տարի բյուզանդագետների XX միջազգային կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում, օգոստոսի 19–25-ին: Սա իր չափերով ամենամեծ կոնգրեսն էր, որին մասնակցում էր ավելի քան 1200 գեկուցող: Կոնգրեսի կազմկոմիտեն Զ.Դագրոնի ղեկավարությամբ հսկայական աշխատանք էր ծավալել նախորդ կոնգրեսից հետո ընկած ժամանակամիջոցում: Կոնգրեսի կազմակերպման հոգսն իրենց վրա էին վերցրել Կոլեժ դը Ֆրանսը և Սորբոնի համալսարանը:

Կոնգրեսի պատվավոր կոմիտեի մեջ ընդգրկվել էին նշանավոր գիտնականներ, համալսարանների ղեկավարներ, Լուվրի և Սգգային դրադարանի տնօրենները, Հունաստանի, Կիպրոսի ղեսպանները և այլն: Գիտական կոմիտեն, որը ղլխավորում էր Զ.Դագրոնը, ներկայացնում էր Ֆրանսիայի գրեթե բոլոր նահանգների համալսարանները, իսկ կազմկոմիտեի կազմում Բրիժիտ Մոնգրենի գլխավորությամբ ընդգրկված էին Միշել Բալարը, Ժան-Կլոդ Շենեն, Վենսեն Դեռոշը, Ժաննիկ Դյուրանը, Դենիս Ֆեյսլը, Բեռնար Ֆլյուգինը, Կրիստիան Ֆորշտելը, Միշել Կապլանը, Սեսիլ Մորիսոնը, Պաոլո Օգորիկոն, Ժան-Պիեռ Սոդինին, Կոստանդին Ցուկերմանը: Կոնգրեսի անգամները կարող էին օդովել իրենց համար հատուկ կազմակերպված ինտերնետային և տեղեկատվական ծառայություններից: Մասնակիցների գրանցումը սկսվեց օգոստոսի 19-ին, նույն օրը Սորբոնի ղեկավարատի մեծ սրահում մասնակիցների համար կազմակերպվեց ընդունելություն: Կոնգրեսի ընթացքում տեղի ունեցան 8 պլենար նիստ, մասնակիցները գեկուցումներ կարդացին 25 կլոր սեղանների և 27 նիստերի

չրջանակներում՝ ազատ հրապարակումների տեսքով: Մասնակիցների գրանցման օրը բոլորին հանձնվեցին Կոնգրեսի նյութերի ամփոփումների եռահատոր ժողովածուն և ծրագիրը:

Մասնակիցները ելույթ էին ունենում Ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, հունարեն: Քննարկումները հաճախ տեղի էին ունենում հիշատակված երեք-չորս լեզուներով միաժամանակ, մասնակիցներին մոտեցնում էր ընտրված թեմայի հարազատությունը, գիտական եզրահանգումների ինքնատիպությունը, նորին մերձենալու բուռն ցանկությունը: Կոնգրեսում հաղթահարված էին մարդկանց անջրպետող բոլոր պատնեշները:

Պլենար նիստերի թեմաները և գրանց պատասխանատուների թվարկումը կարող է ընդհանուր պատկերացում տալ կոնգրեսում քննարկված նյութերի շրջանակի մասին. 1. Ոգին և ձևը բյուզանդական մատենագրության մեջ (Ա. Գարցիա, Ռ. Մեսանո): 2. Գյուղի զարգացումը բյուզանդական կայսրության մեջ (Ա. Լայոն): 3. Բյուզանդիան քրիստոնյա Արևմուտքի և մուսուլմանական աշխարհի միջև. արվեստաբանական տեսանկյուն (Ժ.-Մ. Շպիգել): 4. Աթոս. Սուրբ լեռ. ավանդություն և վերանորոգում արվեստում (Ժ. Գալավարիս): 5. Բյուզանդական իրավունքի հետազոտությունների հաշվեկշիռ (Դ. Զիմոն): 6. Byzantina-metabyzantina. ծայրամասերը ժամանակի և տարածության մեջ (Պ. Օդորիկո): 7. Արևմուտքիցները բյուզանդական կայսրության գավառական քաղաքներում (Մ. Բալար, Ա. Դյուսելիե): 8. Ուսումնասիրության գործիքներ (Հ. Կոդեր և Պ. Շոայներ):

Հայ-բյուզանդական բանասիրության տեսանկյունից հատկապես հետաքրքիր էր Ա. Գարցիայի և Ռ. Մեսանոյի ղեկավարած «Ոգին և ձևը բյուզանդական մատենագրության մեջ» պլենար նիստը, ուր զեկուցողները փորձում էին դասակարգել և լուսաբանել բյուզանդական մատենագրության բառապաշարն ու յուրահատկությունները, ինքնատիպության աղուները (Մ. Բիբիկով, Ի. Շևչենկո), աշխարհիկ տարրերը քրիստոնեական բանաստեղծության մեջ (Ֆ. Կոնկա): Անտիկ շրջանից բյուզանդական գրականությանն անցած ճարտասանության ու երկխոսության գրական ժանրերի, իրավաբանական ու ռազմավարական երկերի բառապաշարի զարգացման, Աստվածաշնչի մեկնությանն անդրադառնալու Ռոմանոս Մելոդոսի և Նիկետաս Խոնիատեսի մոտեցումների յուրահատկությունները (Ա. Իերաչի Բիո, Ռ. Մեսանո, Ջ. Մատինո, Լ. Պեռնո, Մ. Սպադարո) և այլն:

«Գյուղի զարգացումը բյուզանդական կայսրության մեջ» պլենար նիստում ընթերցված զեկուցումները նվիրված էին V-XIV դդ. միջնադարյան եվրոպայում գյուղի հետազոտության այսօրվա բազմաբնույթ մեթոդներին (Բ. Կուրսենտե, Ք. Վիկհամ), արևելյան և հյուսիսային Մակեդոնիայում վերաբնակեցման, Հյուսիսային Աֆրիկայում վաղբյուզանդական գյուղի ուսումնասիրության խնդրներին (Ա. Դուն, Ս. Ելիս): Այս հետազոտությունները հատկապես պետք է հետաքրքրեն հնագետներին և Հայաստանի ավատական կյանքի հետազոտողներին:

Հայագետ-արևելագետներին և հատկապես արվեստի պատմաբաններին, կարծում եմ, ավելի կհետաքրքրեն հաջորդ երկու պլենար նիստերում (ա.

Բյուզանդիան արևելյան քրիստոնեություն և մուսուլմանական աշխարհի միջև. արվեստաբանական քննություն, Բ. Աթոս, Սուրբ Լեո. ավանդույթը և նորացումը արվեստում) հնչած գեկուցումների թեմաները: Ա. Կուտլերը, հետազոտելով բյուզանդական և արաբ պատմագիրների երկերը, քննարկեց երկկողմանի բանակցությունների ընթացքում կայսրերի և խալիֆների փոխանակած հաղուստների և նվերների մասին հաղորդումները: Վ. Ֆրանսուան քննարկեց արևմտյան և արևելյան այն ճանապարհները, որոնցով օտար ամանեղեն էր հայտնվում բյուզանդական կայսրերի սեղաններին: Մ. Գեորգոպոլոսը անդրադարձավ լատինական Մորեայում և Կիպրոսում դոթական ճարտարապետության թողած ազդեցությանը: Այս թեման շարունակեցին Ռ. Նելսոնը և Ժ.-Մ. Շպիգերը, անդրադառնալով Արևմուտքի և բյուզանդական արվեստների ասիմետրիկ փոխհարաբերություններին և փոխազդեցություններին: Սուրբ Լեոան խճանկարների, պատկերազրույթյան, սրբապատկերների և գարդերի վերջին տարիների հետազոտության արդյունքներին էին նվիրել իրենց հետազոտությունը Եվ. և Կ. Լովերդո-Ցիդարիդասները: Հաղորդումներ լսվեցին նաև Աթոսում մանրանկարված ձեռագրերի շրջապատույտի (Գ. Գալավարիս), բյուզանդական շրջանում աթոնացիների վանքերի ճարտարապետական կազմության մասին (Պ. Թեոխարիդես): Աթոս լեռան մոնումենտալ արվեստում պատկերված XIV դ. նոր սրբերի պատկերներին էր նվիրել իր գեկուցումը Բ. Տոդիչը, իսկ Օ. Պոպովան իր գեկուցումը ձոնել էր ուսական հավաքածուներում հանդրվանած Աթոս լեռան վանքերում պատճենված մանրանկարված ձեռագրերին:

Բյուզանդական իրավունքին նվիրված պլենար նիստում գեկուցումներ լսվեցին իրավաբանական բովանդակությամբ պապիրուսների ուսումնասիրության արդի մակարդակի (Ժ. Բյոկամպ), բյուզանդական իրավունքի տեսական խնդիրների (Բ. Շտոլտե), կայսրերի օրենսդրական ժողովածուների նոր դասակարգման (Լ. Բուրգման, Ֆ. Գորիա), օրենսդրքերից դուրս օրենքի, օրենքի և մատենագրության փոխհարաբերությունների մասին (Ռ. Մակրիդես), ինչպես նաև գեկուցում «Բյուզանդական օրենսդրության իրողությունները XIV դ. պատրիարքական վավերագրերում» թեմայով (Ե. Պապաջիանի):

Հաջորդ պլենար նիստը նվիրված էր բյուզանդականին և բյուզանդամետին, որի ընթացքում գեկուցումներ ընթերցվեցին նվիրված ժամանակի և տարածության մեջ կայսրության ծայրամասերի ընկալմանը (Պ. Օդորիկո, Մ. Գալինա), բյուզանդացու ինքնության ձևավորման դործոններին (Վ. Պապուլիա), կայսրության նյութական կյանքում դավառական մայրաքաղաքների նշանակությանը (Մ. Մունդել Մանգո), պատկերամարտության շրջանում Կապադովկիայում և Նաքսոսում կառուցված եկեղեցիների մշակութաբանական քննությունը (Լ. Բրուբակեր), բյուզանդացիների կողմից բարբարոս անվանված հարևանների, կենտրոնի ու ծայրամասերի մշակութային փոխհարաբերության խնդիրներին (Գ. Կավալո), բյուզանդական օրենսդրական դաշտում հավասարակշռության մեխանիզմներին (Դ. Ցուրկա-Պապաստաթի), կայսրության ճակատագրում Սերբիայի խաղացած դերին (Լ. Մաքսիմովիչ, Գ. Սուբոտիչ):

«Արևմտադարձացիները գավառական քաղաքներում» պլենար նիստը ներածական խոսքով բացեց Մ. Բալարը, ընդգծելով, որ ցայսօր Հիմնականում ուսումնասիրվել է Կ. Պոլսի դերը միջերկրածովյան առևտրում: Ներկաներին ղեկուցումներ ներկայացվեցին Քրիստոմ, Փոկեայում և Կիպրոսում ճեպովական առևտրի (Լ. Բալետո), XII–XIII դդ. բյուզանդական գավառական քաղաքներում և Կիպրոսում արևմտյան բնակչության առկայության (Կ. Սիգար, Դ. Յակոբի, Կ. Օտտեն-Ֆրոլ), XV դ. թեսալոնիկյան սկզբնաղբյուրներում վենետիկցիներին վերաբերող տեղեկությունների (Մ. Դոբբե), XIV–XV դդ. Սև ծովի վենետիկյան քաղաքներում առկա օտար բնակչության (Ս. Կարպով), XI–XII դդ. ընթացքում Օխրիդայի և իտալական քաղաքների, Բալկանների և եվրոպական վաճառականների առևտրական կապերի (Բ. Պանով, Վ. Չենցովա), XV դ. վենետիկյան հաշվետոմարներում իր հետքը թողած անգլիացի գրագրի ինքնությունը (Ա. Տալիցինա) պարզաբանման խնդիրներին:

Բյուզանդադիտական կոնգրեսի վերջին օրվա պլենար երեք նիստերը ամբողջովին նվիրված էին բյուզանդագիտությանն օժանդակող գիտաճյուղերի զարգացման հեռանկարներին: Այս բոլոր նիստերում, հատկապես առաջինում, ի մի էին բերվում բյուզանդական սկզբնաղբյուրների հետազոտության վերջին տարիների բոլոր ձեռքբերումները: Պ. Շոայների ծավալուն ներածական խոսքից հետո ղեկուցումներ ընթերցվեցին հնադրուստիան և ձեռագրագիտության (Բ. Մոնդրեն), վավերագրագիտության (Լ. Բուրգման), բառագիտության և լեզվի (Ե. Տրասպ), բյուզանդիայի առօրյա կյանքը և նյութական մշակույթը ներկայացնող սկզբնաղբյուրների (Տ. Կոլիաս), սլաոմական աշխարհագրության (Ժ. Կոդեր), երաժշտության (Ք. Հաննիկ), դրամագիտության (Կ. Մորիսոն) և կնիքագիտության (Ժ.-Կ. Շեննե) նվաճումների վերաբերյալ: Ծրագրավորող մասնագետները ներկայացրեցին *Byzantinische Zeitschrift*-ի մատենագիտության համակարգչային տարբերակի յուրահատկությունները (Ռ. Հիս), բնագրի, նկարի և տեղեկությունների բանկի ստեղծման աշխատանքները վիեննական ծրագրավորողների կողմից (Ք. Գաստգեբեր):

Վերջին պլենար նիստը կարելի է անվանել «Բյուզանդագիտությունը արխիվներում»: Հաղորդում ներկայացվեց Մյունխենի քաղաքային գրադարանում պահպանվող Կ. Կրումբախների թողոնների ուսումնասիրության (Յ. Թինեֆելդ), Ս. Պետերբուրգի արխիվներում պահպանվող ուսուցանողական դասագետների գործերի հրատարակության (Ի. Մեդվեդև), Սոֆիայի համալսարանի Իվան-Դուլչև և կենտրոնի արխիվի հետազոտության անհրաժեշտության (Ա. Դոուրովա, Պ. Շոայներ) մասին: Ձեկուցումներ ընթերցվեցին նաև բյուզանդական սկզբնաղբյուրների հրատարակության շարքերի (Վ. Հյորանդներ) և պրոսոպոգրաֆիային (անձնանունների բառարան) նվիրված հետազոտությունների հրատարակման ծրագրերի մասին (Ռ.-Յ. Լիլի, Մ. Ջեֆրեյս):

Պլենար նիստերից հետո, հաջորդ աստիճանին կարելի է դասել կազմակերպված 25 կլոր սեղանները, որոնք թեզերի գրքում խմբավորված էին հինգ մեծ թեմաների. 1. Տնտեսություն և հասարակություն: 2. Կրոն: 3.

Գիրքը և հասարակութունը: 4. Մատենագրութունը և մշակույթը: 5. Կայսրության կենտրոնն ու ծայրամասերը:

Հայագիտության տեսանկյունից մասնավոր ուշադրության արժանի էին կնիքագիտությանը (Վ. Զայբա, Վ. Շանգրովսկայա), փոքրասիական, հյուսիսասորիքյան և մասնավորապես կիլիկյան բնակավայրերին նվիրված հետազոտութունները (Կ. Բելկե, Ժ.-Պ. Սոդինի): XI գ. Վասպուրականի բնակչության գաղթին անդրադարձավ Ժ. Դեդեյանը: Գրքը կլոր սեղանը, որը վարում էր Նինա Գարսոյանը, անվանված էր «Ոչ հույն արևելյան քրիստոնյաներն իսլամից առաջ», ուր Հայաստանին և նրա մշակույթին նվիրված զեկուցումներով հանդես եկան Շ. Ռընուն, Զ. Ռասսելը, Ռ. Թոմսոնը, Վ. Արուտյունովա-Ֆիդանյանը:

Առանձնացված էին նաև բյուզանդական եկեղեցական մատենագրության տարբեր ժանրերին վերաբերող զեկուցումները, ուր ցույց էր տրվում Կ. Պոլսի աստվածաբանական դպրոցի զարգացման միտումը, նրա փոխհարաբերութունները կաթոլիկ աստվածաբանության հետ: Զեկուցումների մի խումբ անդրադառնում էր Բյուզանդական կայսրության վանական կյանքին, վանքերի մշակութային և տնտեսական գործունեությանը: Կազմակերպիչների ուշադրութունից չէին վրիպել նաև սրբարանների, սրբապատկերների և մասունքների հետազոտության խնդիրները (Հայաստանում իսաչի պաշտամունքի հարցին էր նվիրելու իր զեկուցումը Ժ.-Պ. Մա-հեն, որը ցավոք չլսվեց):

Առանձին նիստ հրավիրվեց պապիրուսի, մագաղաթի և թղթի օգտագործման խնդիրների շուրջ: Բյուզանդական կայսերական վավերագրության հարցերին նվիրեցին իրենց զեկուցումները Ք. Գաստգեբերը, Պ. Շոպյանը: Առանձին նիստ նվիրվեց նաև պահպանված խնդրագրերի հետազոտմանը: Բյուզանդական ձեռագիր գրքի և հասարակության փոխհարաբերութունները հարցին անդրադարձան հնագրության մասնագետները:

Առանձին նիստեր նվիրվեցին բյուզանդական մատենագրության այնպիսի գրական ժանրերի, ինչպիսիք են էպիստոլոգրաֆիան (թղթադիտությունը), էպիգրամը, վարքագրությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, մեկնողական գրականությունը, աստղագիտությունը, բժշկությունը, հիմնագրաֆիան (չարականագիտություն): Հետազոտության իրենց աշխատածեղին և սկզբունքներին ծանոթացրեցին ծեսի և արարողակարգի մասնագետները: Կ. Պոլսի հայկական և բյուզանդական եկեղեցական երաժշտության հարցերի քննարկմանն էր նվիրել իր զեկուցումը Ա. Վարգումյանը:

Առանձնապես աշխույժ մթնոլորտում էին անցնում Բյուզանդական կայսրության ծայրամասերին (Աֆրիկա, Իտալիա, Փոքր Ասիա) նվիրված նիստերը, ուր քննարկվում էին այդ տարածաշրջանների պատմության և մշակույթի խնդիրները: Հիշատակելի է նաև «Բյուզանդիան և նրա պատմությունը 2000-ական թվականներին» հատուկ նիստը, որի նպատակն էր անգրագառնալ տարբեր բնագավառներում և երկրներում բյուզանդագիտության նվաճումներին: Կոնգրեսում զեկուցում լսվեց նաև «Հայ-բյուզանդական ուսումնասիրությունները XXI գ. շեմին» թեմայով (Ա. Բոզոյան):

Գրեթե նույն հարցերի շուրջ էին ձևավորվել նաև «ազատ զեկուցումներ» անվանված նիստերը: Դրանք, ըստ կազմակերպիչների մտահղացման, ընթացակարգի էին երեք հիմնական թեմաների. 1 Գրավոր սկզբնաղբյուրներ (ձեռագրեր և մանրանկարված մատյաններ, գրականություն, պատմիչներ և ժամանակագիրներ, իրավունք, փրկասփայլություն և գիտություններ, աստվածաբանություն, ծես և վարքագրություն): 2 Քաղաքակրթություն (եկեղեցու և կրոնական կյանքի պատմություն, վանականություն, երաժշտություն և հասարակություն, հաստատություններ (պետական և եկեղեցական ինստիտուտներ), տնտեսություն և հասարակություն, գյուղ և բնակչություն, դրամագրություն և կնիքագրություն, ազգային պատմություններ, Բյուզանդիան և հարևաններ): 3 Հնագիտություն և արվեստի պատմություն (պեղումներ, ճարտարապետություն, նախաբյուզանդական զարդարանք և միջին բյուզանդական քանդակ, ուշ բյուզանդական աշխարհիկ արվեստ, հետբյուզանդական Հունաստան, Բյուզանդիան և ծայրամասերը, բյուզանդական և հետբյուզանդական պատկերազրույցություն և այլն):

Մանրանկարված մատյաններ բաժնում լսված զեկուցումներից հայագետներին կհետաքրքրեի Ի. Ռապտիի (Փարիզ) ելույթը, որը նվիրված էր Հեթում II-ի մանրանկարված Ճաշոցին և Ք. Մարանչիի (ԱՄՆ) զեկուցումը՝ ձոնված Կեղծ Կալիսթենեսի վեպի հայկական նկարագրողումներին (Ս. Ղազար – 424): Ուշադրության արժանացավ է. Վարդանյանի զեկուցումը՝ նվիրված 1558 թ. Մինասի կողմից Վասպուրականում նկարագրված Սաղմոսագրքին և Ե. Բալիկա-Վիտակովսկայայի (Շվեդիա) ելույթը, ուր հեղինակն անդրադարձավ Ուսուլայի համալսարանում պահվող Կ. Պոլսում դրված, XVII դարի նկարագրող հայերեն մի ձեռագրի նկարագրությունը: «Հայաստանում և Աղվանքում ազգային գիտակցության ձևավորման շուրջ» զեկուցումով հանդես եկավ Կ. Յուզբաշյանը: Մատենագրության բաժնում հնչեցին Գ. Մուրադյանի («Պիտոյից գրքի հունարեն սկզբնաղբյուրների մասին»), Մ.-է. Շիրինյանի («Հայկական և բյուզանդական մատենագրությունների ուսումնասիրության մեթոդների և գրական ժանրերի համեմատության վերաբերյալ») և Լ. Ստեփանյանի («Հայոց մատենագրության մեջ հիշատակված կարծեցյալ հույն հեղինակները») զեկուցումները: Հայագիտության տեսանկյունից հետաքրքիր էին նաև եկեղեցական պատմագրությանը նվիրված Ի. Վաչեայի («Եվսեբիոս Կեսարացին և վաղ միջնադարյան պատմականության ձևավորումը»), Ի. Խիրուչիի (IV–VI դդ. եկեղեցական պատմագրության զարգացման երեք էտապների մասին), Ա. Թոփչյանի (Մովսես Խորենացու հղումների համակարգի մասին) և Ա. Բարմինի (Ռուսաստան, Հովհաննես Կլավգիոպոլիսի «Ընդդեմ Բաղարջակերաց» երկի մասին) զեկուցումները:

Բյուզանդական քաղաքակրթությանը նվիրված ազատ զեկուցումների մեջ հիշատակելի է Մ.Վ. Կարաբեկի («Պետական-եկեղեցական հերթագայությունը Հուստինիանոս I-ից մինչև Լևոն III») և Պ. Նորդհագենի (պատկերամարտության խնդիրների շուրջ) զեկուցումները: Բյուզանդական արվեստում զրադաշտական խորհրդանշանների հետազոտության խնդիրներին էր նվիրել իր ելույթը Ռ. Ամիրբեկյանը: Արժարժեցին նաև բողոքի-

ների աղանդավորական շարժման ուսումնասիրությանը վերաբերող խնդիրներ, ծրագրված էր նաև Թոնդրակյան շարժմանը (Զ. Պողոսյան) նվիրված գեկուցում, որը, ցավոք, տեղի չունեցավ: Չլսվեց նաև Մ. Լորդ-կիպանիձեի Վրաց Բագրատունիների աստվածային ծագման մասին և Գ. Վարդումյանի Հայ-բյուզանդական ծիսական զուգահեռներին վերաբերող ելույթները:

Զեկուցումներ լսվեցին եկեղեցական ժողովների (Լիոն, Ֆլորենցիա), վանականության իրավական վիճակի, կյանքի, սոցիալական ու ազգային պատկանելության և եկեղեցու պատմության վերաբերյալ: Եկեղեցական երաժշտության և հասարակական կյանքի փոխհարաբերության, Բյուզանդական կայսրության մեջ ներքինիների ինստիտուտի զարգացման, եկեղեցու և պետության մեջ նրանց խաղացած դերի մասին, գավառական ազնվականության և գինվորականության, Ֆինանսական գործի և գյուղատնտեսության վերաբերյալ: Մասնավոր նիստեր նվիրվեցին նաև դրամագիտությանն ու կնիքագիտությանը, առանձին ազգային ընդհանրությունների և ժողովուրդների պատմությանը (եթովպներ, ասորիներ, Հայեր, վրացիներ, հունգարներ, ռումիներ, սլավոններ, սելջուկ-թյուրքեր, թուրքեր):

Ազատ գեկուցումների Հաջորդ բաժինը նվիրված էր Հնագիտությանն ու արվեստի պատմությանը: Այստեղ գեկուցումներ ընթերցվեցին Բյուզանդիայի և նրան հարևան տարածաշրջանների կերամիկայի, երկաթագործության, ոսկեգործության, զգեստների, ապակեգործության, պատկերազրույթի, շինարարական արվեստի և ճարտարապետության վերաբերյալ: Մեզ համար առանձնապես հետաքրքիր էր Հնագիտության մասնաճյուղի նիստերից մեկը, որը գրեթե ամբողջությամբ վերաբերում էր Կիլիկիայի վաղ բյուզանդական պաշտպանական և եկեղեցական կառույցներին, ուր գեկուցումներով հանդես եկան Հնագետներ Ի. Ֆուլանը, Ֆ. գր Մաֆեին, Մ. Դելլա Վալեն, Ա. Պարիբենին, Ա. Յակոբինին, Է. Լաֆլին:

Կոնգրեսին ներկա Հայաստանի դիտնականներն իրենց շնորհակալությունն են հայտնում Հայաստանում Ֆրանսիական դեպանության մշակութային կցորդ պարոն Ժ. Մարտենին, Մոնպելիեի համալսարանի պրոֆ. Ժ. Դեդեյանին, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անգամ Կ. Մուլթաֆյանին և Անանուն մեկենասին՝ Փարիզի XX միջազգային կոնգրեսի հայ պատվիրակներին ցույց տված բարոյական և նյութական աջակցության համար:

Կոնգրեսն իր մասշտաբներով անջնջելի տպավորություն թողեց մասնակիցներին վրա և մեկ անգամ ևս ապացուցեց, որ միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության շատ խնդիրներ իրենց լուծումը կարող են գտնել Հայաստանում բյուզանդագիտական ուսումնասիրությունների զարգացման ճանապարհով: Եվս մեկ անգամ ապացուցվեց՝ Հայաստանում պիտի ձևավորվի բյուզանդագիտական դպրոց իր տարեգրքով, որը, իմ կարծիքով, կարող է լինել արգեն տաս տարի ֆինանսական զժվարությունների պատճառով սառեցված «Կովկաս և Բյուզանդիա» պարբերականը:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ